«ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Համբարձում Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ հայոց լեզվի եւ գրականության (12 դասաժամ), ֆրանսերեն (8 դասաժամ) եւ անգլերեն (12 դասաժամ) , ֆիզկուլտուրա (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

1. Դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3. Անձը հաստատող փաստաթուղթ,

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (Ձեւ 5),

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 4-ից մինչեւ 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին, Ապարանի Հ. Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Մարշալ Բաղրամյան փողոց, 2-րդ փակուղի, շենք՝ 1:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 098 25-59-80: